ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ
ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ

(ՆԱԽԱԳԻԾ)

ք. Ստեփանակերտ
2018թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Ներածություն	3
2.	Հայեցակարգի նպատակները	3
3.	Իրականացված բարեփոխումները	4
4.	Առկա խնդիրները	11
5.	Հարկային բարեփոխումների ուղղություններն ու նախանշված նպատակներին հասնելու եղանակները	14
5.1.	Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված օրենսդրական բարեփոխումների իրականացում	15
5.2.	Հսկողական աշխատանքների և մեխանիզմների կատարելագործում	17
5.2.1.	Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման և կանխիկ գործարքների թերհայտարարագրման դեմ պայքար	18
5.2.2.	Տնտեսության մեջ կատարվող գործարքների փաստաթղթավորման խնդրի լուծում	19
5.2.3.	Չձևակերպված վարձու աշխատողների և աշխատավարձերի թերհայտարարագրումների դեմ պայքար	20
5.2.4.	Ապօրինի ձեռնարկատիրության և ագրեսիվ հարկային պլանավորման դեմ պայքար	22
5.2.5.	Չկատարած հարկային պարտավորությունների աճի սահմանափակմանն ու նոր ապառքների կուտակման կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացում	23
5.2.6.	Ռիսկերի կառավարման արդյունավետ գործող համակարգի ներդրում	23
5.2.7.	Վերլուծական կարողությունների ընդլայնում	24
5.3.	Հարկ վճարող - հարկային մարմին փոխհարաբերման դաշտի բարելավում .	26
5.4.	Հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործում	29
6.	Ամփոփում	32

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ

Արցախի Հանրապետության հարկային մարմնի հիմնական ***առաքելությունն է՝*** պետական եկամուտների կայուն աճի ապահովում՝ «հարկման արդարացիություն և հավասարություն» սկզբունքի կիրառման ու հարկ վճարողների շրջանում հարկերի ինքնուրույն հաշվարկման և վճարման մշակույթի ամրապնդման միջոցով:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հայեցակարգը մշակվել է հիմք ընդունելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017-2020 թվականների ծրագիրը՝ նպատակ ունենալով սահմանել առաջիկա տարիների ընթացքում հարկային մարմնի զարգացման հիմնական ուղղություններն ու նախանշված նպատակներին հասնելու եղանակները:

Սույն հայեցակարգը նախատեսված է ինչպես ոլորտի պետական կառավարման մարմինների, մասնագիտական ու հասարակական կազմակերպությունների, առանձին մասնագետների, այնպես էլ հարկային համակարգով հետաքրքրվող քաղաքացիների համար:

Սույն հայեցակարգում ամփոփված են հարկային բարեփոխումների հիմքում դրված հիմնական սկզբունքները, ուղղություններն ու նպատակադրումները:

Սույն հայեցակարգի դրույթները պարբերաբար կարող են վերանայվել՝ ելնելով հնարավոր նոր մարտահրավերներից և սույն հայեցակարգով սահմանված թիրախների առաջնահերթությունից:

2. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Սույն հայեցակարգի նպատակներն են՝

1) ամրապնդել հարկ վճարողների կողմից հարկերի ինքնուրույն հաշվարկման և վճարման մշակույթը.

2) կրճատել տնտեսության ստվերային երևույթները՝ ապահովելով երկրի տնտեսական անվտանգությունը.

3) տնտեսավարող սուբյեկտների համար ապահովել գործունեության հավասար մրցակցային պայմաններ.

4) բարելավել երկրի գործարար ու ներդրումային միջավայրը.

5) ապահովել հարկային եկամուտների կայունությունը՝ նախատեսելով հարկային եկամուտների շարունակական աճ:

3. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Արցախի Հանրապետության հարկային համակարգն անցել է զարգացման շուրջ 20 տարի և իր կայացման ընթացքում որդեգրել է հարկերի հաշվարկման ու վճարման ինքնագնահատման սկզբունքը: Ինքնագնահատումն արդյունավետ հարկային վարչարարության կարևորագույն բաղադրիչներից է: Այն ենթադրում է հարկ վճարողների կողմից իրենց առևտրային գործունեության արդյունքում պետական բյուջե վճարման ենթակա հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ինքնուրույն, ինքնակամ գնահատումը, հաշվարկումը և վճարումը:

Ինքնագնահատման համակարգը հատուկ է զարգացած շատ երկրների, ինչը նաև խոսում է հարկային համակարգի զարգացման աստիճանի մասին: Այն նպաստում է հարկային համակարգում ազնվության և հավասարության սկզբունքի ամրապնդմանը՝ միևնույն ժամանակ ընդգծելով յուրաքանչյուր հարկ վճարողի իրավունքները և պարտականությունները:

Հարկ վճարողների շրջանում հարկերի ինքնուրույն հաշվարկման և վճարման մշակույթի ձևավորման ու արմատավորման նպատակով զգալի աշխատանքներ են տարվել հարկային դաշտի բարելավման, բիզնեսի համար թափանցիկ և մրցակցային դաշտի ամրապնդման ու ներդրումային գրավչության բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես, վերջին տասը տարիների ընթացքում բարեփոխումներ են իրականացվել հետևյալ ուղղություններով.

1) օրենսդրական փոփոխություններ *(ներդիր 1),* որոնց թվում են՝

ա. փոքր շրջանառություն ունեցող սուբյեկտների համար արտոնագրային վճարներով հարկման համակարգի ներդրումը, ինչի արդյունքում նրանց պարտավորությունները սահմանափակվել են արտոնագրային վճարների կատարումով՝ առանց հարկային մարմիններին հաշվարկ-հաշվետվություններ ներկայացնելու պահանջի.

բ. նոր ստեղծված հարկ վճարողներին եռամսյա ժամկետով առևտրի հարկի, հաստատագրված և արտոնագրային վճարների գծով արտոնությունների տրամադրումը, ինչը որոշակիորեն իջեցնում է գործարարության ռիսկայնության մակարդակը գործունեության սկզբնական փուլում՝ նպաստելով նոր ստեղծված հարկ վճարողների ձեռնարկատիրության զարգացմանն ու կայացմանը.

գ. փոքր ու միջին ձեռնարկատիրության համար հաշվետվությունների ներկայացման պարբերականության կրճատումը: Մասնավորապես, այն անհատ ձեռնարկատերերը, որոնց իրացման շրջանառությունը նախորդ տարվա ընթացքում չի գերազանցել 36,0 մլն ՀՀ դրամը, և ովքեր չեն իրականացնում լիցենզավորման ենթակա գործունեություն և չունեն վարձու աշխատողներ, հնարավորություն է ընձեռվել հաշվարկ-հաշվետվությունները և այլ տեղեկությունները ներկայացնել կիսամյակային պարբերականությամբ՝ ամսական կամ եռամսյակային պարբերականության փոխարեն.

դ. փաստաթղթաշրջանառության բեռի թեթևացումն ու հարկային մարմին ներկայացվող հաշվետվությունների ցանկի կրճատումը, ինչն իր հերթին դրական է անդրադառնում նաև սպասարկման մակարդակի բարձրացման և արդյունավետ ընթացիկ վերահսկողություն իրականացնելու տեսանկյունից՝ հնարավորություն տալով հարկային մարմիններին կենտրոնանալ առավել մեծ իրացման շրջանառություն ունեցող հարկ վճարողների վրա.

ե. տնտեսության գերակա ոլորտների մասով արտոնությունների սահմանումը, այդ թվում՝ գյուղատնտեսության, զբոսաշրջության, բնակարանային շինարարության, գյուղատնտեսական հումքի վերամշակման և մի շարք այլ ոլորտների մասով, ինչը խթանում է այդ ոլորտների զարգացումը.

զ. ներդրումների ներգրավման նպատակով ընկերության կանոնադրական կապիտալում 100,0 մլն ՀՀ դրամ և ավելի ներդրում կատարելու դեպքում շահութահարկի գծով ժամկետային արտոնությունների սահմանումը.

է. հարկային օրենսդրության խախտումների համար նախատեսված պատժամիջոցների չափերի նվազեցումը, ինչը միտված է վարչարարության մեղմացմանն ու հարկային հսկողության արդյունավետության բարձրացմանը.

ը. պարտավորություններ կուտակած հարկ վճարողներին պարտավորությունների աստիճանական մարման հնարավորության ընձեռնումը՝ տույժերի և տուգանքների որոշակի մասից ազատման միջոցով.

թ. հիպոթեքային վարկի շրջանակում վարձու աշխատողի կողմից վճարված եկամտային հարկի վերադարձի ծրագրի ներդրումը.

Ներդիր 1. Օրենսդրական փոփոխությունների ազդեցությունը

- 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ Արցախի Հանրապետությունում գործող հարկ վճարողների ավելի քան 22 տոկոսը կամ մոտ 1 300 հարկ վճարողներ հարկվում են արտոնագրային վճարների հարկման համակարգով:
- Յուրաքանչյուր տարի եռամսյա ժամկետով արտոնություններ են տրամադրվում ավելի քան 600 նոր ստեղծված հարկ վճարողների, որի արդյունքում գործունեությունը նոր սկսող հարկ վճարողները նշված ժամկետում ազատվում են առևտրի հարկի, հաստատագրված վճարների և արտոնագրային վճարների կատարումից:
- 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ մոտ 1 000 հարկ վճարողներ հաշվարկ-հաշվետվությունները ներկայացնում են կիսամյակային պարբերականությամբ:
- Արտոնագրային վճարների հարկման համակարգի ներդրման, հաշվարկ-հաշվետվությունների և այլ տեղեկությունների ներկայացման պարբերականության կրճատման շնորհիվ հարկային մարմին ներկայացվող փաստաթղթերի քանակը կրճատվել է տարեկան շուրջ 70 000-ով, այդ թվում՝

- արտոնագրային վճարների հարկման համակարգի ներդրման արդյունքում կրճատվել են մոտ 40 000 փաստաթղթեր.

- հաշվարկ-հաշվետվությունների կիսամյակային ներկայացման պարբերականության ներդրման արդյունքում կրճատվել են ավելի քան 30 000 փաստաթղթեր:

Միջինում մեկ հարկ վճարողի հաշվով հարկային մարմին ներկայացվող հաշվարկ-հաշվետվությունների և այլ տեղեկությունների քանակը կրճատվել է շուրջ երկու անգամ և կազմում է եռամսյակային կտրվածքով յոթ փաստաթուղթ:

- Կանոնադրական կապիտալում ներդրումներ կատարելու շնորհիվ 30 հարկ վճարողներ օգտվել են ավելի քան 1,4 մլրդ ՀՀ դրամ գումարի չափով շահութահարկի արտոնությունից:
- 2015 թվականի ապրիլի 1-ից մինչև 2018 թվականի հունվարի 1-ը 296 վարկառուների կատարվել է շուրջ 287,0 մլն ՀՀ դրամ գումարի չափով եկամտային հարկի վերադարձ:

2) հարկ վճարողների սպասարկման մակարդակի բարձրացում *(ներդիր 2)*, այդ թվում՝ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի գործարկումը, ինչը հնարավորություն է տալիս հարկ վճարողներին ցանկացած կետից և ցանկացած պահի առանց հարկային մարմին այցելությունների ուղարկել հաշվետվություններ՝ այդպիսով տնտեսելով նաև ժամանակային և ֆինանսական ռեսուրսները.

Ներդիր 2. Հաշվետվությունների էլեկտրոնային համակարգի ներդրման կատարողականության ցուցանիշը

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվետվությունների ամբողջական փաթեթը էլեկտրոնային եղանակով ներկայացնողների թիվը կազմում է շուրջ 2 200 հարկ վճարող կամ հաշվետվություն ներկայացնող հարկ վճարողների մոտ 50 տոկոսը: Ընդ որում, բոլոր հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացման ենթահամակարգից օգտվողների մեջ ավելի քան 68 տոկոսը կամ 1 500 հարկ վճարողներ կամավոր հիմունքներով են միացել էլեկտրոնային համակարգին:

3) հարկ վճարողների իրազեկվածության մակարդակի բարձրացում *(ներդիր 3)*, այդ թվում՝

ա. հարկ վճարողների հետ պարբերաբար սեմինարների և հանդիպումների կազմակերպումը.

բ. նոր ստեղծված հարկ վճարողներին օժանդակության նպատակով այցելությունների կանոնակարգի ներդրումը, որի համաձայն հարկ վճարողի ցանկությամբ տարեկան առնվազն երկու անգամ հարկային մասնագետների կողմից այցելություններ են կազմակերպվում՝ տեղում պարզաբանելով օրենսդրական դրույթները, ուսուցանվում հաշվետվությունների էլեկտրոնային համակարգից օգտվելու գործընթացը.

գ. հարկային մարմնի պաշտոնական կայքէջի գործարկումը.

դ. թեժ գծի և «Սկայպ» (Skype) հեռաձայնային ծառայության գործարկումը.

Ներդիր 3. Հարկ վճարողների իրազեկվածության ապահովման կատարողականության ցուցանիշը

➢ Տարվա կտրվածքով Ստեփանակերտ քաղաքում և շրջաններում գործող հարկ վճարողների հետ կազմակերպվում են միջինում տասը սեմինար-քննարկումներ՝ ընդգրկելով մոտ 1 500 հարկ վճարողների ներկայացուցիչների:

➢ Հարկային մարմնի կայքէջի այցելուների քանակը կազմում է տարեկան միջինում 160 000 այցելու:

➢ Հարկ վճարողների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով 2017 թվականի ընթացքում նոր ստեղծված 137 հարկ վճարողների մոտ կազմակերպվել են այցելություններ և տեղում պարզաբանվել օրենսդրական դրույթները, ինչպես նաև տրամադրվել հարկման համապատասխան ռեժիմների (առևտրի հարկով, հաստատագրված վճարներով և ընդհանուր հարկման ռեժիմների) վերաբերյալ ուղեցույց-գրքույկներ, որոնցում պարունակվող տեղեկատվության իմացությունը բիզնեսն արդյունավետ կազմակերպելու և հնարավոր սխալներից խուսափելու անհրաժեշտ պայմաններից է:

4) հարկային վարչարարության բարելավում *(ներդիր 4)*, այդ թվում՝

ա. ստուգումների քանակի կրճատումը՝ դրանք իրականացնելով ռիսկային չափանիշների հիման վրա, ինչը հսկողությունը դարձնում է առավել նպատակային և հասցեական.

բ. կամերալ ուսումնասիրությունների համակարգի գործարկումը, որը հարկ վճարողներին հնարավորություն է տալիս խուսափել հետագայում ստուգումներով կիրառվելիք տուգանքներից.

գ. ստվերային երևույթների չափերի նվազեցմանն ուղղված համակարգված միջոցառումների իրականացումը, այդ թվում՝ չփաստաթղթավորված գործարքների, հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման, չձևակերպված աշխատողների և ֆիզիկական անձանց ստացված եկամուտների իրական մեծությունների թերհայտարարագրման դեմ հարկային հսկողության ակտիվացումը: Բացի այդ իրականացվել են նաև օրենսդրական փոփոխություններ, այդ թվում՝ սահմանվել են նոր վարչարարական գործիքներ (ներդրվել է չափագրումների ինստիտուտ, պակասորդների հայտնաբերման նոր կարգ), սահմանվել և հստակեցվել են փաստաթղթերին ներկայացվող հիմնական պահանջները.

դ. ապառքների կառավարման համակարգի ներդրումը, որի շրջանակներում պարտավորություններ կուտակած հարկ վճարողներին՝ կախված դրանց ռիսկայնությունից ներկայացվում են ծանուցումներ, իրականացվում վճարունակության ուսումնասիրություններ, կիրառվում արգելադրումներ և ներկայացվում դատական հայցեր.

ե. Արցախի Հանրապետություն ներմուծվող և արտահանվող ապրանքանյութական արժեքների հաշվառման գործընթացի բարելավումը, այդ թվում՝

ներդրվել է ապրանքանյութական արժեքների հաշվառման ընտրողականության սկզբունք՝ հիմնված ռիսկերի կառավարման համակարգի վրա, որի կիրառմամբ ոչ ռիսկային, կարգապահ և շուտ փչացող ապրանքանյութական արժեքներ ներմուծող հարկ վճարողները, որոնց ցանկերը հաստատվում են կիսամյակային պարբերականությամբ, ինքնահայտարարագրում են ներմուծված ապրանքանյութական արժեքները,

հսկիչ կետերի և կենտրոնական աշխատակազմի միջև էլեկտրոնային կապի ստեղծումը, ինչը հնարավորություն է տալիս իրական ժամանակում (on-line ռեժիմով) հավաքագրել տեղեկատվությունը միասնական տեղեկատվական համակարգում:

Ներդիր 4. Հարկային վարչարարության ազդեցությունը

- 2007 թվականի համեմատ 2017 թվականին ստուգումների թիվը կրճատվել է շուրջ երկու անգամ (2017 թվականին կատարվել է պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 281 ստուգում՝ 2007 թվականի 547 ստուգման դիմաց): Ընդ որում, 2017 թվականին ստուգված հարկ վճարողների մասնաբաժինը գործող հարկ վճարողների մեջ կազմում է մոտ 5 տոկոս՝ 2007 թվականի 17 տոկոսի դիմաց:
- Յուրաքանչյուր տարի կամերալ ուսումնասիրության են ենթարկվում հարկ վճարողների ավելի քան 10 000 հաշվարկ-հաշվետվություններ:
- Հարկային իրավախախտումների դեմ համակարգված պայքար իրականացնելու նպատակով մշակվել և կիրառության մեջ է դրվել «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգը, որի շրջանակներում իրականացված բացատրական և հսկողական միջոցառումների արդյունքում բարելավվել են մի շարք ցուցանիշներ, այդ թվում՝ հարկ վճարողերի կողմից ինքնահայտարարագրման և ճշտված հաշվարկներ ներկայացնելու միջոցով: Մասնավորապես,

- առևտրի ոլորտում իրացման շրջանառությունները 2017 թվականին կազմել են ավելի քան 56 270,0 մլն ՀՀ դրամ, որը 2015 թվականի համեմատ ավել է մոտ 7 տոկոսով.

- աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների մեծությունը (առանց Արցախի Հարապետության ամենախոշոր հարկ վճարողի՝ «Բեյզ Մեթըլս» ընկերության ցուցանիշների) 2017 թվականին կազմել է ավելի քան 61 673,0 մլն ՀՀ դրամ, որը 2015 թվականի համեմատ ավել է մոտ 6 տոկոսով.

- 2017 թվականի ընթացքում Արցախի Հանրապետություն ապրանքանյութական արժեքների ներմուծման ծավալները կազմել են ավելի քան 111 675,0 մլն ՀՀ դրամ, իսկ արտահանման ծավալները՝ ավելի քան 75 650,0 մլն ՀՀ դրամ, որոնք 2015 թվականի նույն ցուցանիշները գերազանցել են համապատասխանաբար 7,3 տոկոսով և 2,6 անգամ.

- հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքների գումարը 2017 թվականին 2015 թվականի համեմատ նվազել է ավելի քան 9 տոկոսով՝ կազմելով մոտ 3 836,0 մլն ՀՀ դրամ:

Կատարված հարկային բարեփոխումների, հետևողական վարչարարության, հսկողական մեխանիզմների արդյունավետության բարձրացման և տնտեսական աճի շնորհիվ պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքի գծով մուտքերը 2010 թվականի համեմատ 2017 թվականին աճել են շուրջ 85 տոկոսով *(Գծապատկեր 1):*

Գծապատկեր 1. Հարկային եկամուտների և պետական տուրքի գծով կատարողականը 2010-2017թվականներին

Հարկային եկամուտների և պետական տուրքի գծով կատարողականները՝ ՀՆԱ-ի հարկվող ճյուղերի նկատմամբ 2010-2017 թվականներին տատանվել են 29,3-.33,7 տոկոսի սահմաններում:

Աղյուսակ 1. Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՆԱ-ի հարկվող ճյուղերի նկատմամբ 2010-2017 թվականներին

Տարեթիվը	Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՆԱ-ի հարկվող ճյուղերի նկատմամբ (%)
2010	29,7
2011	29,6
2012	30,9
2013	29,3
2014	29,3
2015	33,7
2016	29,8
2017	30,3

4. ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած իրականացված հարկային բարեփոխումներին, դեռևս առկա են որոշակի խնդիրներ՝ օրենսդրական և վարչարարական դաշտում: Մասնավորապես.

1) օրենսդրական դաշտում խնդիրները կապված են հարկային օրենսդրության հաճախակի փոփոխություններով (հաճախ գործարարները չեն հասցնում հետևել փոփոխություններին), օրենսդրական դրույթներում առկա երկիմաստություններով (տարբեր դրույթներ կարող են երկակի մեկնաբանվել), իսկ բիզնեսի տեսանկյունից՝ ամենակարևորը հարկային քաղաքականության կանխատեսելիությունն է, քանի որ հարկային օրենսդրության հաճախակի փոփոխություններն անորոշություն են

առաջացնում տնտեսավարող սուբյեկտի մոտ, ինչը բացասական է ազդում ընդհանուր տնտեսության վրա.

2) հարկային վարչարարության մասով խնդիրներն են՝

ա. տնտեսությունում ստվերային երևույթների առկայությունը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներկայումս առավել ռիսկային են առևտրի, շինարարության, ապրանքների արտադրության և բնակչության սպասարկման ոլորտները: Ստվերային տնտեսության, ինչպես նաև թաքնված եկամուտների ձևավորման հիմնական պատճառներից են՝

տնտեսությունում չփաստաթղթավորված գործարքների առկայությունը,

հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտմամբ իրականացվող գործարքների առկայությունը,

չձևակերպված վարձու աշխատողների առկայությունը:

Մասնավորապես, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հարկ վճարողների կողմից կատարվող գործարքների մեջ մոտ 15-17 տոկոսը կազմում են առանց հաշվարկային փաստաթղթերի կամ գործարքների իրական գներից էականորեն տարբերվող գներով կազմված փաստաթղթերով կամ օրենսդրությամբ սահմանված՝ փաստաթղթավորման պահանջների ոչ պատշաճ ապահովմամբ իրականացվող գործարքները, մեկ անգամ դուրս գրված հաշվարկային փաստաթղթի հիման վրա հետագա չփաստաթղթավորված գործարքները: Այս բոլորը վերջին հաշվով հանգեցնում է նրան, որ անմիջական արտադրողներից կամ ներմուծողներից մինչև սպառում ամբողջ շղթայում խաթարվում է գործարքների փաստաթղթավորումը: Արդյունքում, տնտեսավարող սուբյեկտների իրական շրջանառություններն ու ապրանքների (ծառայությունների) իրական գները, դրանց քանակները հարկային հաշվառման մեջ չեն արտացոլվում:

Մանրածախ առևտրի ոլորտում եկամուտները թաքցնելու ամենատարածված եղանակը հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտմամբ գործարքների իրականացումն է:

Վարձու աշխատողների ձևակերպման, նրանց վճարվող եկամուտների լրիվ ծավալով արտացոլման խնդիրը ևս շարունակվում է համարվել հրատապ խնդիր: Այս

մասով իրավախախտումների թվում են, երբ գործատուները համաձայնության գալով աշխատակիցների հետ կամ չեն ձևակերպում աշխատակիցներին կամ աշխատանքային պայմանագրում փաստացի աշխատավարձից ցածր աշխատավարձ են գրանցում, ինչը թույլ է տալիս գործատուին ավելի քիչ հարկ վճարել: Նշված «ստվերային» գործարքը հետագայում ուղղակիորեն անդրադառնում է աշխատողի կենսաթոշակի մակարդակի վրա: Սակայն, այն պատճառով, որ կենսաթոշակի չափը բազմաթիվ աշխատողների համար դեռևս ոչ շոշափելի և ապագային պատկանող խնդիր է, այս հարցում աշխատողը ևս շահագրգռված չէ գործատուին պարտադրել իր ձևակերպումը.

բ. հարկային պարտավորությունների կուտակումը: Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ կազմակերպությունները փոքր սեփական կապիտալի առկայությամբ կուտակում են այդ կապիտալը մի քանի անգամ գերազանցող պարտավորություններ, ինչը հետագայում դժվարացնում է դրանց գանձումը, քանի որ հիմնադիրներից համապատասխան հարկեր գանձելու կամ նրանց նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու մեխանիզմները սահմանափակ են.

գ. հարկային համակարգում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների շրջանակների ընդլայնման անհրաժեշտությունը: Ներկայումս հարկային հաշիվների դուրս գրումը, դրամարկղային և առևտրի հարկ վճարողների կողմից եկամուտների և ծախսերի վերաբերյալ գրքերի վարումն իրականացվում է թղթային տարբերակով: Ավտոմատացված կերպով չի իրականացվում նաև հարկային մարմնի կողմից հարկ վճարողների անձնական հաշվի քարտերի վարումը, հարկ վճարողների պարտավորությունների վերաբերյալ ծանուցագրերի պատրաստումն ու տրամադրումը, ստուգման հանձնարարագրերի և ակտերի կազմումը, ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականությունը, վարչական իրավախախտումների կազմումը և մի շարք այլ գործառույթներ, ինչը բավականին ժամանակատար է և հանդիսանում է թույլ տրվող սխալների ու բացթողումների հիմնական պատճառը.

դ. հարկ վճարողների՝ իրենց պարտականությունների և իրավունքների իրազեկվածության ոչ բարձր մակարդակը: Մասնավորապես, հաճախ հարկ

վճարողների կողմից սխալները թույլ են տրվում ոչ թե դիտավորությամբ, այլ օրենսդրության չիմացության պատճառով.

ե. հասարակության թույլ ներգրավվածությունը պետական ծրագրերում: Նախաձեռնվող հարկային բարեփոխումներում կարևոր նշանակություն ունի հասարակության ակտիվ ներգրավվածությունը, ինչը հնարավորություն է տալիս ճիշտ ընկալել բարեփոխումները և աջակցել դրանց իրագործումը: Կարևորվում է նաև իրավախախտումների հայտնաբերման գործընթացին հասարակության մասնակցությունը, ինչը այսօր բավարար մակարդակի վրա չի գտնվում. հարկերից խուսափողների նկատմամբ հասարակությունը համապատասխան վերաբերմունք չի դրսևորում, ինչը կդրսևորվեր այլ իրավախախտումներ կատարողների նկատմամբ:

5. ԱՌԱՋԻԿԱ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՆԱԽԱՆՇՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Հարկային համակարգի ռազմավարական զարգացումը կընթանա հետևյալ հիմնական ուղղություններով.

1) գործարար միջավայրի բարելավմանն ուղղված օրենսդրական բարեփոխումների իրականացում.

2) հսկողական աշխատանքների և մեխանիզմների կատարելագործում.

3) հարկ վճարող-հարկային մարմին փոխհարաբերման դաշտի բարելավում.

4) հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործում:

Ռազմավարական նպատակներին հասնելու համար հարկային ծառայող-հարկ վճարող շփման ժամանակ հարկային մարմնի համար որպես ուղենիշ կշարունակեն հանդիսանալ հետևյալ արժեքները՝

1) ***օրինականությունը՝*** հարկային մարմինը կշարունակի լինել հետևողական՝ իր գործողությունների ժամանակ առաջնորդվելով բացառապես գործող օրենսդրական նորմերով և պահպանելով հարկային ծառայողի էթիկայի կանոնները,

2) ***օբյեկտիվությունը՝*** առաջնորդվելով օրենսդրության համահավասար կիրառման սկզբունքով՝ հարկային մարմինը կշարունակի լինել անաչառ, արդար վստահելի կառույց հարկ վճարողների համար,

3) ***թափանցիկությունը՝*** կշարունակվեն հարկ վճարողներին ժամանակին իրազեկման աշխատանքները՝ ստեղծելով վստահության մթնոլորտ վերջիններիս շրջանում:

5.1. ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Մեր երկրի հարկային համակարգն անցել է ձևավորման ու զարգացման շուրջ երկու տասնամյակ ընդգրկող ժամանակահատված, և թեև այդ ընթացքում առանձին օրենսդրական փոփոխություններով մշտապես լուծվել են հարկային համակարգի կատարելագործման, մրցունակության բարձրացման, գործարար միջավայրի բարելավման ու պետական բյուջեի համար անհրաժեշտ հարկային եկամուտների ապահովման խնդիրները, այդուհանդերձ տնտեսության զարգացման ներկա միտումներն ու նոր մարտահրավերները հարկային հարաբերությունները նորովի կարգավորելու օբյեկտիվ անհրաժեշտություն են առաջացրել:

Այս առումով նախատեսվում է հասարակության լայն շերտերի ներգրավմամբ հարկային օրենսգրքի մշակումը, որը կարևոր ներդրում կլինի տնտեսության ակտիվացման, գործարար միջավայրի հետագա բարելավման ու օտարերկրյա ներդրումների ներգրավման գործում, ինչի արդյունքում հնարավոր կլինի ապահովել երկարաժամկետ և կայուն տնտեսական աճ: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ հարկային օրենսգրքի առկայությունն ինքնին խոսում է առավել կայացած, կայուն և կանխատեսելի հարկային համակարգի ու հարկային միջավայրի մասին: Հետևաբար, հարկային օրենսգրքի առկայությունը նաև կարևոր ու դրական ազդակ կլինի ներդրողների համար:

Հարկային օրենսգրքի ընդունմամբ հնարավորություն կընձեռնվի մեկ միասնական փաստաթղթով կարգավորել ինչպես հարկ վճարողների հարկային

հաշվառման, հարկերի հաշվարկման ու վճարման, հարկ վճարողների սպասարկման ու նրանց գործունեության նկատմամբ հսկողության իրականացման, հարկային պարտավորությունների հաշվառման, այնպես էլ հարկային օրենսգրքի պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցների կիրառության, հարկային հարցերով վարչական վարույթի իրականացման, հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցների կիրառության ու հարկային ծառայողների գործողությունների և անգործության բողոքարկման հետ կապված հարաբերությունները:

Օրենսդրական բարեփոխումների շարքում նախատեսվում է նաև.

1) վերանայել և օպտիմալացնել ակցիզային հարկով հարկվող որոշ ապրանքների դրույքաչափերը.

2) նվազեցնել փոքր սուբյեկտների հարկային բեռը՝ զուգահեռաբար ընդլայնելով պարզեցված հարկման ռեժիմների կիրառության շրջանակները.

3) վերանայել հարկային արտոնությունների շրջանակը՝ դրանք դարձնելով առավել հասցեական և նպատակային.

4) կատարելագործել գույքահարկով և հողի հարկով հարկման սկզբունքները, մասնավորապես, պարզեցնել գույքային հարկերի ոլորտում իրականացվող վարչարարությունը, այդ թվում՝ ներդնել անշարժ գույքի հարկը, վերանայել գույքահարկի և հողի հարկի վճարման ու հաշվարկների ներկայացման ժամկետները.

5) որոշակիորեն թեթևացնել պարտավորություններ կուտակած հարկ վճարողների հարկային բեռը ՝ հետագա ֆինանսական առողջացման նպատակով.

6) վերանայել կանխիկ գործարքների մասով գործող սահմանափակումները, այդ թվում՝ աստիճանաբար անցում կատարել աշխատավարձերի և այլ վճարումների անկանխիկ վճարման համակարգին, ինչը կնպաստի տնտեսության ստվերային շրջանառությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

Իրականացվող օրենսդրական բարեփոխումները կուղեկցվեն տնտեսության հարկաբյուջետային կայունության մակարդակի բարձրացմամբ, ինչն իր հերթին ենթադրում է պետական և համայնքային բյուջեների հարկային եկամուտների կայուն աճ:

5.2. ՀՍԿՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Հարկային համակարգի կենսունակությունն ու գործունակությունը, ի թիվս այլ գործոնների, ուղղակիորեն կախված է հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների (այսուհետ՝ հարկային իրավախախտումներ) դեմ պայքարի արդյունավետությունից: Հարկերի վճարումից խուսափելը, հարկային պարտավորություններն ամբողջությամբ չկատարելը գործնականում նույնացվում է ստվերային տնտեսության հետ: Վերջինիս առկայությունը համակարգային հիմնախնդիր է, որի լուծման համար պահանջվում է հետևողական աշխատանք:

Կարևորելով ստվերային տնտեսության դեմ արդյունավետ պայքարը՝ հարկային մարմինը որդեգրել է ստվերային տնտեսության կրճատման համար համապատասխան կարողությունների ձևավորման անհրաժեշտությունը՝ շեշտը դնելով հարկերի վճարումից խուսափելու դեպքերի բացահայտման վրա, մասնավորապես, առաջնային համարելով հարկային օրենսդրությունը կանխամտածված խախտողների նկատմամբ խիստ հսկողության իրականացումը:

Սույն հայեցակարգում հարկային իրավախախտումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման հնարավորությունները դիտարկվում են հետևյալ հիմնական ուղղություններով.

1) հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման և կանխիկ գործարքների թերհայտարարագրման դեմ պայքար.

2) տնտեսության մեջ կատարվող գործարքների փաստաթղթավորման խնդրի լուծում.

3) չձևակերպված վարձու աշխատողների և աշխատավարձերի թերհայտարարագրումների դեմ պայքար.

4) ապօրինի ձեռնարկատիրության և ագրեսիվ հարկային պլանավորման (ագրեսիվ հարկային պլանավորումը միջազգային պրակտիկայում լայնորեն տարածված դեպքերից է, որի նպատակը հարկերից խուսափելու տարբեր սխեմաների միջոցով ավելի քիչ հարկեր վճարելն է) դեմ պայքար.

5) չկատարած հարկային պարտավորությունների աճի սահմանափակմանն ու նոր պարտավորությունների կուտակման կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացում.

6) ռիսկերի կառավարման արդյունավետ գործող համակարգի ներդրում.

7) վերլուծական կարողությունների ընդլայնում:

Սույն հայեցակարգում համակարգված ձևով նկարագրվում են առավել տարածված հարկային իրավախախտումները և նախանշվում դրանց դեմ պայքարի ուղղություններն ու միջոցառումները: Հատկանշական է, որ հարկումից խուսափելու կամ ագրեսիվ հարկային պլանավորում իրականացնելու որևէ սխեմա կամ որևէ հնարավորություն, որը հաջողությամբ օգտագործվում է որևէ ոլորտում, կարող է ընդհանրապես կիրառելի չլինել մյուսում: Այս առումով, հարկման բազաների հաշվառման նպատակով համապատասխան համակարգերի ու գործիքների ընտրությունը կատարելիս անհրաժեշտ է անպայմանորեն հաշվի առնել տվյալ ոլորտի առանձնահատկությունները և ոլորտին հատուկ ռիսկերը:

Հարկային վարչարարության առումով տնտեսության՝ ռիսկային համարվող ոլորտներում նոր ստեղծվող արդյունքի ու հարկման բազաների ճշգրիտ հաշվառման խնդիրների լուծումը համարվում է հարկային իրավախախտումների դեմ պայքարի կարևոր ուղղություններից մեկը:

Սույն հայեցակարգի շրջանակներում իրականացվող միջոցառումների թիրախային խմբում ներառված են լինելու այն հարկ վճարողները, ովքեր կանխամտածված և չարամտորեն խուսափում են հարկային պարտավորություններն ամբողջովին և ժամանակին կատարելուց:

5.2.1. ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԹԵՐՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Հարկային իրավախախտումների դեմ պայքարի շրջանակներում առանձնակի կարևորվում է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման և տնտեսության մեջ կանխիկ դրամական միջոցներով իրականացվող

գործարքների զգալի նվազեցումը, ինչի արդյունքում կկրճատվեն ստվերային տնտեսության ծավալները՝ նպաստելով հարկման բազայի ընդլայնմանն ու լրացուցիչ հարկային եկամուտների ապահովմանը:

Այս առումով, հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման, կանխիկ դրամով իրականացվող գործարքների նկատմամբ հսկողական միջոցառումներն առաջիկայում լինելու են շարունակական: Աստիճանաբար անցում է կատարվելու նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառությանը: Վերջինս միացված կլինի հարկային մարմնի տվյալների շտեմարանին, ինչը հնարավորություն է տալիս իրական ժամանակում (on-line ռեժիմով) հսկողություն սահմանել հարկ վճարողների իրացման շրջանառությունների նկատմամբ:

5.2.2. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՄԱՆ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՈՒՄ

Հարկային իրավախախտումների դեմ պայքարի շրջանակներում առաջնային ուղղություններից է համարվում տնտեսության մեջ կատարվող՝ ապրանքների մատակարարման ու ծառայությունների մատուցման գործարքների լիակատար փաստաթղթավորման խնդրի լուծումը: Վերջինս ենթադրում է հսկողական ու վարչարարական նշանակության աշխատանքների արդյունավետության բարձրացում:

Այս առումով, շարունակական հսկողական աշխատանքներ են տարվելու Արցախի Հանրապետության տարածք ներմուծումների, տնտեսության մեջ կատարվող գործարքների լիարժեք փաստաթղթավորման, ապրանքների դրոշմավորման կանոնների պահպանման նկատմամբ, ինչպես նաև լայնորեն կիրառվելու է չափագրումների համակարգը:

Մասնավորապես, սույն հայեցակարգի շրջանակներում նախատեսվում է.

1) Արցախի Հանրապետության տարածք ներմուծումների և արտահանումների նկատմամբ հսկողության իրականացում, այդ թվում՝

ա. առևտրի ոլորտի՝ ըստ ապրանքախմբերի կառուցվածքի վերլուծություն, ռիսկային հատվածների բացահայտում.

բ. հսկիչ կետերում օպերատիվ դիտարկումների անցկացում.

գ. ռիսկային որակված հատվածներում ապրանքանյութական արժեքների հաշվառումների իրականացում՝ գների ճշգրիտ արտացոլմամբ.

2) Արցախի Հանրապետության տարածքում առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների փաստաթղթավորման և գրանցման նկատմամբ հսկողության իրականացում, այդ թվում՝ հաշիվ-ապրանքագիր դուրս չգրող հարկ վճարողների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն, դրանց հիմքով չափագրումների իրականացում և ձեռնարկատիրական գործունեության առարկաների գրանցման ճշտության, պակասորդի հայտնաբերման ստուգումների իրականացում.

3) ակցիզային դրոշմանիշներով և դրոշմապիտակներով դրոշմավորման կանոնների պահպանմանն ուղղված հսկողական միջոցառումների իրականացում:

Վերոնշյալ միջոցառումների իրականացումը թույլ կտա՝

1) կրճատել ստվերային շրջանառությունները, սահմանափակել հարկերը թաքցնելու հնարավորությունները.

2) տնտեսության մեջ ապահովել հավասար մրցակցային պայմաններ.

3) նպաստել գործարար ու ներդրումային միջավայրի բարելավմանը:

5.2.3. ՉՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԻ ԹԵՐՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Վարձու աշխատողների ձևակերպման, նրանց վճարվող եկամուտների լրիվ ծավալով արտացոլման խնդիրն օրակարգային է: Պետության խնդիրն է ստեղծել այնպիսի պայմաններ, որ ոչ միայն աշխատողը, այլև գործատուն չցանկանա աշխատել ստվերում: Խնդիրը հատկապես սրանում է կուտակային կենսաթոշակային համակարգին անցնելու համատեքստում, քանի որ կուտակային կենսաթոշակային համակարգի պարագայում առանցքային է լինելու անձի՝ աշխատանքային տարիների ընթացքում կենսաթոշակային հաշվին կատարած կուտակումները:

2014 թվականին Արցախի Հանրապետությունում ներդրվել է եկամտային հարկի անձնավորված հաշվառման համակարգ, այսինքն՝ հարկային մարմնում ձևավորվում է բազա յուրաքանչյուր ֆիզիկական անձի վճարված եկամուտների, պահված հարկի

գումարների վերաբերյալ, ինչը թույլ է տալիս վերլուծությունների արդյունքներով հայտնաբերել աշխատավարձերի կամ աշխատողների թվաքանակի թերհայտարարագրումների դեպքերը:

Այս առումով, հարկային մարմնի կարևոր խնդիրն է հանդիսանում՝ վերհանել առավել ռիսկային ոլորտներն ու հարկ վճարողների թիրախային խմբերը՝ իրականացնելով լայնածավալ բացատրական և հսկողական աշխատանքներ:

Մասնավորապես, սույն հայեցակարգի շրջանակներում իրականացվելու են չձևակերպված վարձու աշխատողների, առանց գրանցման հայտի ներկայացման և աշխատավարձի թերհայտարարագրումների դեպքերի բացահայտմանն ուղղված վերլուծական աշխատանքներ ու դրանց հիմքով հսկողական միջոցառումներ, այդ թվում՝

ա. նախորդ ամսվա համեմատ վարձու աշխատողների թվաքանակը նվազեցրած հարկ վճարողների ցանկերի վերհանում,

բ. հաշվետու ամսվա ընթացքում աշխատողների թվաքանակի աճի կամ կայունության պարագայում աշխատավարձի նվազում հայտարարագրած հարկ վճարողների ցուցանիշների վերլուծություն,

գ. ելնելով ոլորտային առանձնահատկություններից եկամտային հարկի հաշվարկներում որպես հարկային գործակալ առանց քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու ֆիզիկական անձանց վճարված եկամուտներից եկամտային հարկը պահելու և բյուջե վճարելու դեպքեր չհայտարարագրած՝ հարկ վճարողների ցանկերի վերլուծություն,

դ. ըստ գործունեության ոլորտների ոլորտային միջին աշխատավարձի ցուցանիշից նվազ ցուցանիշ հայտարարագրած հարկ վճարողների ցանկերի վերլուծություն,

ե. չձևակերպված վարձու աշխատողների կամ առանց գրանցման հայտի ներկայացման վարձու աշխատողների հայտնաբերմանն ուղղված հսկողական միջոցառումների իրականացում:

5.2.4. ԱՊՕՐԻՆԻ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԳՐԵՍԻՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարբեր երկրներում իրականացվում են տարբեր տեսակի հարկային իրավախախտումներ և կիրառվում են հարկերից խուսափելու տարբեր սխեմաներ: Դրանք կապված են ինչպես ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղվելու, այնպես էլ ագրեսիվ հարկային պլանավորում իրականացնելու հետ: Միջազգային պրակտիկայում լայնորեն տարածված է ագրեսիվ հարկային պլանավորման դեպքերը, երբ հարկ վճարողները հարկերից խուսափելու տարբեր սխեմաների միջոցով փորձում են ավելի քիչ հարկեր վճարել: Ի տարբերություն ապօրինի ձեռնարկատիրության, որը օրենսդրորեն ուղղակիորեն որակվում է որպես հարկերի վճարումից խուսափելու դեպք և կիրառվում պատժամիջոցներ, ագրեսիվ հարկային պլանավորումն առավել դժվար է որակել որպես հարկային օրենսդրության խախտում, քանի որ լրացուցիչ ապացույցների հավաքագրման ու կիրառելիության հնարավորությունները բարդ են և խնդիրներ են առաջանում իրավիճակների ստույգ որակման ու դրանից բխող անհրաժեշտ միջոցառումների իրականացման հետ կապված: Հաճախ որոշակի օրինաչափություններ են բացահայտվում հարկային իրավախախտումների առանձին տեսակների և դրանք իրականացնող հարկ վճարողների ոլորտային պատկանելիության, չափերի, նրանց կողմից ընտրված հարկման այս կամ այն համակարգի և այլ բնութագրիչների միջև: Այս առումով, հարկային իրավախախտումների դեմ պայքարի ռազմավարությունը պետք է լինի տարբերակված ու հասցեական:

Ապօրինի ձեռնարկատիրության և ագրեսիվ հարկային պլանավորման դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով կկատարելագործվի երրորդ անձանցից տեղեկությունների ստացման, համադրման և իրացման համակարգը, ինչպես նաև կբարձրացվի նման վարքագիծ դրսևորող հարկ վճարողների նկատմամբ հսկողական աշխատանքների արդյունավետությունը: Հարկային պլանավորման տարաբնույթ սխեմաների ու գործիքների կիրառության բացահայտման նպատակով

կիստակեցվեն նաև անուղղակի եղանակներով հարկային պարտավորությունների հաշվարկման մեխանիզմները:

5.2.5. ՉԿԱՏԱՐԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՃԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆՆ ՈՒ ՆՈՐ ԱՊԱՌՔՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Հարկային վարչարարության բնագավառի հրատապ խնդիրների շարքում առանձնանում են հարկային պարտավորությունները: Այս առումով, վարչարարության սլաքն ուղղվելու է ոչ միայն նոր պարտավորությունների կուտակումներ թույլ չտալուն, այլ նաև առկա պարտավորությունների նվազեցման օրենսդրական մեխանիզմների հետևողական կիրառությանը:

Այս տեսանկյունից նախատեսվում է աշխատանքներն իրականացնել՝ ըստ հետևյալ հիմնական ուղղությունների.

1) կուտակված պարտավորությունների դասակարգում ըստ ռիսկայնության՝ բարձր ռիսկային դասակարգված հարկային պարտավորությունների մասով անհապաղ իրականացնելով արգելադրումներ, իսկ սնանկության հատկանիշների դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կներկայացվեն սնանկության հայցեր՝ կանխամտածված սնանկության հատկանիշների առկայության դեպքում համապատասխան անձանց նկատմամբ հարուցելով Արցախի Հանրապետության քրեական օրենսդրությամբ նախատեսված վարույթներ.

2) միջոցառումներ կձեռնարկվեն գանձման առումով անհուսալի ճանաչված պարտավորությունների կատարման նպատակով անհրաժեշտ գույք կամ եկամուտներ հայտնաբերելու ուղղությամբ: Այս առումով կարևորվում է նաև դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության հետ համագործակցության խորացումը:

5.2.6. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Ժամանակակից հարկային համակարգերի կարևորագույն խնդիրներից է հարկային մուտքերի ապահովումը՝ նվազագույն վարչարարական ծախսերի

կատարմամբ: Ներկայումս հարկային մարմինը նախապատվություն է տալիս ռիսկերի կառավարման վրա հիմնված հսկողությանը: Ռիսկերի կառավարման գործընթացը կանոնակարգվում է հարկային մարմնի ղեկավարի հրամաններով. կիրառվում է ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգ, որը հնարավորություն է տալիս ուշադրությունն ու ռեսուրսները կենտրոնացնել առավել ռիսկային ոլորտների և առավել ռիսկային տնտեսավարող սուբյեկտների վրա: Այս ուղղությամբ նախատեսվում է ներդնել ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության էլեկտրոնային ավտոմատ կառավարման համակարգ, ինչը հնարավորություն կընձեռնի ավելի արդյունավետ դարձնել ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության գործընթացը, նպաստել հարկային կարգապահության, ինչպես նաև հարկային մարմնի դերի (վարկանիշի) բարձրացմանը, նվազեցնել ստուգումների ընտրության ժամանակ մարդկային գործոնի ազդեցությունը և առավելագույն արդյունավետությամբ օգտագործել հարկային մարմնի տվյալների բազայում առկա տեղեկատվությունը՝ ռիսկերի վերհանման և գնահատման առումով:

5.2.7. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

Ստվերային տնտեսության և հարկային իրավախախտումների դեմ պայքարում խիստ կարևոր դերակատարություն ունեն և արդյունավետ գործիքներ են համարվում նաև տարբեր մակարդակներում ու տարբեր ուղղություններով իրականացվող վերլուծությունները: Վերջիններս հնարավորություն են ընձեռնում բացահայտել ռիսկային կետերը ինչպես տնտեսության ոլորտների, այնպես էլ առանձին ապրանքային շուկաների ու հարկ վճարողների մակարդակում: Այդ կապակցությամբ, սույն հայեցակարգի իրականացման ողջ ընթացքում հատուկ ուշադրություն է հատկացվելու ինչպես վերլուծական կարողությունների ընդլայնմանն ու կատարելագործմանը, այնպես էլ կոնկրետ ուղղություններով պարբերաբար իրականացվող վերլուծություններին:

Շատ կարևոր է, որպեսզի հստակ փոխկապվածություն լինի վերլուծական աշխատանքների, ռիսկային չափանիշների հիման վրա գործող էլեկտրոնային

կառավարման համակարգերի և տեղեկատվության իրացման գործընթացների միջև, քանի որ վերլուծական աշխատանքները՝

1) հնարավորություն են ընձեռնում ձևավորել տնտեսության ոլորտների, ապրանքային շուկաների և հարկ վճարողների ռիսկայնության նոր չափորոշիչներ, որոնց հիման վրա ընտրվում են տնտեսության ռիսկային հատվածները.

2) բացահայտում են հարկ վճարողների կարգապահական ցածր մակարդակի դրսևորումներն ու պատճառները, որոնց վերացման նպատակով մշակվում և իրականացվում են հասցեական կարգապահական ծրագրեր:

Մյուս կողմից, հարկ վճարողների վարքագծի ուսումնասիրությունն ու արդյունքների վերլուծությունը հնարավորություն է ընձեռնում բացահայտել առանձին տեսակի և հաճախ հանդիպող իրավախախտումների պատճառներն ու խթանները և միջոցներ ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ՝ դրանով իսկ կանխարգելելով այդ իրավախախտումների հետագա դրսևորումները: Այլ կերպ ասած, եթե հարկային համակարգում ձևավորվում են որոշակի երևույթների ոչ ցանկալի միտումներ (հարկային իրավախախտումների ծավալների աճ, հարկային մուտքերի նվազում, ապառքների ավելացում և այլն), վերլուծությունների իրականացմամբ բացահայտվում են դրանց հիմնական պատճառները, և միջոցներ են ձեռնարկվում այդ ոչ ցանկալի միտումները չեզոքացնելու ուղղությամբ:

Գերակա խնդրի սահմանումը պայմանավորված է հարկային համակարգում իրականացվող՝ տվյալների մշակման աշխատանքների կենտրոնացման ու համախմբման անհրաժեշտությամբ, ինչը կարևորվում է նաև ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետ գործարկման և կիրառման տեսանկյունից: Այս ուղղությամբ նախատեսվում է կենտրոնացնել հարկային համակարգում իրականացվող վերլուծական աշխատանքները՝ ձևավորելով ռիսկերի կառավարման և մոնիթորինգի ստորաբաժանում, որտեղ կկենտրոնացվեն վերլուծությունների իրականացման գործառույթները՝ արդյունավետ վերահսկողություն սահմանելով ռիսկային ոլորտների և ռիսկային հարկ վճարողների նկատմամբ:

5.3. ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ - ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՄԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հարկ վճարողների սպասարկման ոլորտի զարգացման կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացումը նպաստում է ինքնագնահատման համակարգի ամրապնդմանը, հարկերի ճիշտ և ժամանակին հաշվարկման ու վճարման մշակույթի ձևավորմանը, թույլ է տալիս նվազեցնել հարկային մարմնի կողմից կատարվող հսկողական աշխատանքների ծավալը՝ հարկ վճարողների՝ իրենց պարտականությունների և իրավունքների իրազեկվածության բարձրացման շնորհիվ:

Մասնավորապես, զարգացած հարկային համակարգեր ունեցող երկրների փորձով հիմնավորվում է, որ հարկ վճարողների կրթության, տեղեկացվածության մակարդակի բարելավման, հարկեր վճարելու քաղաքացիական պարտքի սերմանման, պետականաշինության գործում իրենց ներդրումն ունենալու ու ինքնուրույնաբար հարկեր վճարելու գիտակցության ամրապնդման վրա ծախսվող ռեսուրսները բազմապատիկ անգամ ավելի փոքր են, քան հարկերի գանձման այս ճանապարհը չընտրած երկրների կողմից հարկային իրավախախտումների դեմ պայքարի և հարկադրաբար հարկեր գանձելու գործընթացի վրա ծախսվող ռեսուրսները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ սույն հայեցակարգի շրջանակներում մեծապես կարևորվելու է հարկային համակարգի նկատմամբ հասարակության վստահության ամրապնդմանը և հարկ վճարողների շրջանում ինքնահայտարարագրման սկզբունքի ու կամովին հարկեր վճարելու մշակույթի արմատավորմանն ուղղված լայնածավալ աշխատանքների իրականացումը:

Այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների շրջանակներում նախատեսվում է՝

1) կատարելագործել հարկ վճարողների սպասարկման միասնական ստանդարտները՝ ապահովելով դրանց հրապարակայնությունը.

2) ձեռնարկել միջոցներ հարկ վճարողների իրազեկման և ուսուցման համակարգի շարունակական կատարելագործման ուղղությամբ.

3) տեղեկատվական տարբեր աղբյուրներով հրապարակել օրինապահ հարկ

վճարողների ցանկերը՝ վերջիններիս նկատմամբ կիրառելով վստահության վրա հիմնված հարկային վարչարարություն՝ ռիսկերի բացահայտումն իրականացնելով կամերալ ուսումնասիրություններով և վերլուծություններով, զերծ մնալով ստուգումների իրականացումից.

4) համակարգի գործունեության թափանցիկության ապահովման շրջանակներում՝

ա. հասարակությանը ներգրավել հարկային վարչարարության կազմակերպման գործընթացներին,

բ. իրականացվող բարեփոխումների գործընթացին երիտասարդ կադրերին ընդգրկելու, անմիջականորեն ոլորտի պատասխանատուների հետ իրենց հուզող հարցերը քննարկելու նպատակով պարբերաբար հանդիպումներ կազմակերպել ուսանողության հետ,

գ. հասարակության գնահատականի ստացման նպատակով կազմակերպել հարկային վարչարարության ընթացակարգերի վերաբերյալ հարցումներ՝ ինտերնետային կայքի միջոցով,

դ. տեղեկատվական-քարոզչական նյութերի տարածում, այդ թվում՝ զանգվածային լրատվական միջոցներով.

5) առանձնակի ուշադրության կենտրոնում պահել հարկային ծառայողի կերպարը՝ ապահովելով հարկային ծառայողին հարիր վարքագիծ: Այս առումով կարևորվում է հարկային ծառայողների մասնագիտական գիտելիքների, աշխատանքային հմտությունների շարունակական զարգացումը, այդ թվում՝ վերապատրաստումների անցկացում, ինչպես տեղում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ուսումնական կենտրոնում և միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող դասընթացներում, հարկ վճարողների հետ հաղորդակցման կանոնների տիրապետման և էթիկայի նորմերի ամրապնդումը:

Հարկ վճարողների սպասարկման ծառայությունները կարող են մատուցվել հաղորդակցման տարբեր եղանակներով, ինչպես հարկային ծառայողների անմիջական մասնակցությամբ, այնպես էլ ավտոմատացված կարգով: Մատուցվող ծառայությունները պետք է բաժանել փուլերի՝ մեծ տեղ հատկացնելով օրենսդրական

դրույթների «նախահրահանգավորմանը» (advance ruling): Եվրոպական երկրների մեծամասնությունում նախահրահանգավորումները պարտավորեցնող են հարկային մարմինների համար, ինչը նշանակում է, որ հարկ վճարողները պաշտպանված են հետագա հարկային խախտումներից: Ընդ որում, նախահրահանգավորումները կարող են լինել ինչպես զանգվածային, այնպես էլ անհատական: Այս առումով նախատեսվում է պարբերաբար կազմակերպել սեմինարներ օրենսդրական փոփոխությունների իրազեկման նպատակով, ինչպես նաև այցելություններ կազմակերպել անմիջականորեն հարկ վճարողների գործունեության վայրեր՝ տեղում ցուցաբերելով մեթոդական օժանդակություն: Մեծ դեր կունենան նաև հարկային մարմնի պաշտոնական կայքի, թեժ գծի և «Սկայպ» (Skype) հեռաձայնային ծառայության միջոցով հարկ վճարողներին տրվող իրազեկումներն ու պարզաբանումները:

Հարկային օրենսդրության մատչելի մատուցման նպատակով նախատեսվում է նաև՝

1) հարկ վճարողների մոտ հաճախ առաջացող հարցերի և դրանց պատասխանների, ինչպես նաև հաճախ թույլ տրվող սխալների գծով շտեմարանների կատարելագործում, արագագործ փնտրման համակարգի գործարկում.

2) մեդիահոլովակների պատրաստում.

3) կիսամյակային պարբերականությամբ «Հարկատու» պարբերականի հրապարկում, որով հարկային համակարգի մասնագետների, անկախ փորձագետների միջոցով պարբերաբար հանրությանը կներկայացվեն հարկային համակարգում տեղի ունեցող օրենսդրական, վարչարարական նորությունները, գործարարի հաջողություններն ու համաշխարհային տնտեսական նորույթները:

Հարկերի ինքնուրույն հաշվարկման և ժամանակին վճարման մշակույթի ձևավորման և դեռևս վաղ հասակից քաղաքացիներին իրենց իրավունքների պաշտպանումը խրախուսելու նպատակով հանդիպումներ կկազմակերպվեն դպրոցական տարբեր տարիքի երեխաների և ուսանողության հետ՝ նրանց ներկայացնելով հարկերի վճարման կարևորությունը երկրի զարգացման և տնտեսական անվտանգության համար:

5.4. ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Հարկային մարմնում իրականացվող բարեփոխումների կարևորագույն ուղղություններից է տեղեկատվական հոսքերի արդյունավետ կառավարման համակարգի ձևավորումը, որը հնարավորություն կտա առավելագույնի հասցնել տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի կիրառումը, ավտոմատացնել հարկային մարմնի խոշոր գործառույթները, ունենալ հարկ վճարողների վերաբերյալ ամբողջականացված տվյալների ժամանակակից բազա, նվազագույնի հասցնել մարդկային գործոնի ազդեցությունը, ուժեղացնել հարկային մարմնի վերլուծական և հսկողական կարողությունները և, ի վերջո, բարձրացնել հարկային մարմնի աշխատանքների արդյունավետությունը:

Էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի ընդլայնումը հնարավորություն կտա.

1) բարելավել հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակը, մասնավորապես ի հաշիվ հարկային հաշվետվությունների ընդունման և մշակման, հարկ վճարողների հետ իրականացվող փաստաթղթաշրջանառության վրա ծախսվող ժամանակի զգալի կրճատման, հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների շրջանակների էական ընդլայնման.

2) տնտեսել զգալի մարդկային և ժամանակային ռեսուրսներ ի հաշիվ ձեռքով իրականացվող գործառույթների գերակշիռ մասի փոխարինման ավտոմատացված եղանակով իրականացվող գործընթացների (մասնավորապես՝ հաշվետվությունների ընդունումն ու մշակումը, անձնական հաշվի քարտերի վարումը, կամերալ հսկողության իրականացումը և այլն), ինչը հնարավորություն կտա վերապրոֆիլավորել հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների զգալի թվով աշխատակիցների՝ միաժամանակ էապես բարձրացնելով նաև վերջիններիս մասնագիտական պատրաստվածության աստիճանը.

3) էապես բարձրացնել հարկային վարչարարության արդյունավետությունը, քանի որ ներդրվող ավտոմատացված գործընթացները հնարավորություն կընձեռնեն ավելի արագ և առավել մեծ ճշտությամբ բացահայտելու ինչպես ռիսկային ոլորտները, այնպես էլ ռիսկային հարկ վճարողներին, որոնք խուսափում են իրենց հարկային պարտավորությունները պատշաճ կատարելուց, և համակարգի բոլոր ռեսուրսները առավել հասցեական կարող են ուղղվել հարկային իրավախախտումների բացահայտմանն ու կանխարգելմանը.

4) զգալիորեն մեծացնել հարկային համակարգի ընդհանուր ինտելեկտուալ ներուժը, որը կարող է ուղղվել առավել որակյալ վիճակագրական և այլ վերլուծությունների իրականացմանը՝ նպաստելով հարկային պարտավորությունների ընդհանուր մակարդակի նվազեցմանը:

Աղյուսակ 2. Էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի առավելությունները

Ինչ է շահում պետությունը	Ինչ է շահում հարկ վճարողը
Ծառայությունների որակի բարձրացում և արագության ապահովում	Հաշվետվությունների լրացման հարմարություն և սխալների բացառում
Արցախի Հանրապետության ամբողջ տարածքից տվյալների անմիջական և միաժամանակյա մուտքագրում հարկային ծառայության էլեկտրոնային շտեմարան	Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանում այցելելու անհրաժեշտության բացակայություն
Հարկ վճարողների հետ շփման արագ և հուսալի միջավայր	Հաշվետվությունների պատմություն և արխիվ
Աշխատանքի արդյունավետության բարձրացում	Լրացման կարգերի փոփոխությունների անմիջական արտացոլում
Թղթային կրիչներով ներկայացվող հաշվետվությունների քանակի կրճատում	
Հաշվետվությունների մշակման ծախսերի կտրուկ նվազեցում	
Արցախի Հանրապետությունում էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների զարգացում	

Այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների շրջանակներում առաջնահերթ նախատեսվում է՝

1) ընդլայնել հարկային հաշվետվությունների ու տեղեկությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման հնարավորությունները *(Գծապատկեր 2)*.

2) ավտոմատացնել հարկ վճարողների պարտավորությունների հաշվառման գործընթացը, ինչը հնարավորություն կտա բացառել մարդկային գործոնի միջամտությունն ու սխալների հավանականությունը, տնտեսել ժամանակային ռեսուրսները՝ կենտրոնանալով վերլուծական աշխատանքների վրա.

3) ներդնել էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման համակարգը, ինչի արդյունքում էականորեն կտնտեսվեն հարկ վճարողների ժամանակային և ֆինանսական ռեսուրսները.

4) կենսաթոշակային բարեփոխումների շրջանակում ներդնել սոցիալական (կուտակային) վճարների անձնավորված հաշվառման համակարգը.

5) հարկերի և պարտադիր վճարների էլեկտրոնային եղանակով վճարումներն ապահովելու նպատակով աստիճանաբար ներդնել պետական վճարումների էլեկտրոնային համակարգը.

6) Արցախի Հանրապետության տարածք ներմուծվող և արտահանվող ապրանքանյութական արժեքների հաշվառումն իրականացնել ժամանակակից չափանիշներին համապատասխան՝ կատարելագործելով հաշվառման գործառույթները.

7) ընդլայնել հարկ վճարողների գործունեության ընթացքում առաջացած խնդիրների վերաբերյալ վերջինների կողմից ուղարկվող ծանուցումների համակարգի կիրառումը՝ օգտագործելով առավելապես էլեկտրոնային համակարգերի հնարավորությունները: Կուսումնասիրվեն նաև կարճ հաղորդագրությունների «էսէմէս, էմէմէս» (SMS, MMS) տեսքով հարկային պարտավորությունների մասին ծանուցագրերի և հիշեցումների ուղարկման համակարգի ներդրման հնարավորությունները:

Բացի այդ, ներկայումս, երբ հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվում ու մշակվում է էլեկտրոնային եղանակով, խիստ կարևոր է դառնում այդ տեղեկատվության պահպանման հարցը: Այս առումով սերվերների տեղադրման անհրաժեշտություն կառաջանա, որոնց հզորությունները կապահովեն համակարգերի արդյունավետությունը, հնարավորություն տալով ցանկացած խափանման դեպքում

շարունակել առցանց աշխատանքը, խափանված մասի վերանորոգումը, տվյալների վերականգնումը: Հարկային մարմնի տեղեկատվական բազայում հավաքագրվող տեղեկատվության զգալի մասը ներկայացնում է հարկային գաղտնիք: Այս առումով անհրաժեշտ է լիովին վերացնել տեղեկատվության արտահոսքի հնարավորությունը:

Գծապատկեր 2. Էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնող հարկ վճարողների 2018 թվականին կանխատեսվող աճի դինամիկան



6. ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հայեցակարգը՝ համահունչ լինելով ներկայումս իրականացվող հարկային համակարգի բարեփոխումներին, հնարավորություն է տալիս սահմանելու հարկային մարմնի զարգացման ուղղությունները: Հարկային ոլորտում իրականացվող բարեփոխումները չեն սահմանափակվում միայն հարկային մարմնով, դրանք համապատասխանում են նաև Արցախի Հանրապետության կառավարության կողմից տնտեսության զարգացմանն ուղղված ծրագրերին:

Սույն հայեցակարգը կազմվել է համապատասխան նպատակների տեսքով, որոնց հասնելու համար սահմանվել են առաջնահերթ իրականացման ենթակա միջոցառումները:

Ակնկալվում է, որ սույն հայեցակարգով նախատեսված միջոցառումների իրականացման շնորհիվ հարկ վճարողների շրջանում ի դեմս հարկային մարմնի կամրապնդվի վստահությունը պետության հանդեպ՝ համոզմունք ձևավորելով հետևյալ երկու կարևոր հարցերում.

1) հարկեր վճարում են բոլոր տնտեսավարող սուբյեկտները և չկա որևէ տնտեսավարող սուբյեկտ, որն օրենքով սահմանված հարկերը չի վճարում և դրանով իսկ անհավասար մրցակցային պայքարի մեջ է մտնում կարգապահ հարկ վճարողների հետ.

2) տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարվող հարկերն ամբողջությամբ ծախսվում են արդյունավետ և թափանցիկ ձևով՝ պետական բյուջեով նախատեսված ուղղություններով: